ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՆՎԵԼ ԶՈՒԼԱԼՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ անվանի պատմաբան Մանվել Զուլալյանի ծննդյան 70 տարին: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս Մանվել Կարապետի Զուլալյանը ծնվել է 1929 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ֆրանսիական դպրոցում: 1947 թ. հայրենադարձության քարավանով ընտանիքի հետ ներգաղթել է Հայաստան ու բնակություն հաստատել Լենինական (Գյումրի) քաղաքում: Բարձր ցուցանիշներով ավարտել է Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության, իսկ այնուհետև Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռոմանո-գերմանական ֆակուլտետները: 1954 թ. ընդունվել է Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրա:

Հետպատերազմյան տարիներին Հայաստանի նորաստեղծ Գիտությունների ակադեմիան հանդես եկավ գիտության տարբեր ճյուղերի զարգացման ծավալուն ծրագրով: Պատմության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը, հավուր պատշաճի ըմբռնելով հայ պատմագիտության առաջ ծառացած հիմնախնդիրները, ընտրեց օտար լեզուների հիմնավոր տիրապետող հայրենադարձ շնորհալի երիտասարդների և գործուղեց Լենինգրադ (Պետերբուրգ) մասնագիտանալու: Այդ խմբի մեջ էին Գ. Տիրացյանը (հնագիտություն), Հ. Փափազյանը (պարսկագիտություն), Հ. Բարթիկյանը (բյուզանդագիտություն), Ա. Տեր-Ղևոնդյանը (արաբագիտություն), Հ. Մելքոնյանը (ասորագիտություն) և ուրիշներ: Նրանք, ավարտելով մասնագիտական ուսուցումը, բոլորն էլ վերադարձան հայրենիք, աշխատանքի անցան ԳԱ համակարգում և կարևոր ու արդյունավետ գործունեություն ծավալեցին պատմագիտության զարդացման ասպարեզում: Այդ համաստեղության մեջ էր նաև Մ. Զուլալյանը:

Գիտական մասնագիտացումը նա ստացավ Լենինգրադի համալսարանի արևելագիտության ֆակուլտետում՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ: Տիրապետելով թուրքերենին և այլ օտար լեզուների, Մ. Զուլալյանը ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի ուշ միջնադարի պատմության ուսումնասիրման գործին: Օրինակելի աշխատասիրությամբ ու նվիրումով խորացավ ինչպես հալագիտության, այնպես էլ թուրքագիտության բնագավառում և դարձավ հայ թուրքագիտության լավագույն ավանդույթների արժանի շարունակողն ու զարգացնողը:

Տքնաջան աշխատասիրությամբ ու պատասխանատվության բարձր զգացումով ամբարելով հարուստ գիտելիքներ՝ Մ. Զուլալյանն առաջին

իսկ հրապարակումներով ներկայացավ որպես հասուն պատմաբան: Մ. Զուլալյան մասնագետին հավասարապես մատչելի են ինչպես աղբյուրագիտությունը, այնպես էլ պատմագիտական հարցերի հետազոտությունը: Նա իր նախասիրությունը սկսեց իրականացնել նախ սկզբնաղբյուրները շրջանառության մեջ գնելով: Շուտով, Ա. Խ. Սաֆրաստյանի հեղինակցությամբ Մ. Զուլալյանը հրատարակում է «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դարերի Կանուններ)» աշխատությունը (1964 թ.): Այդ աղբյուրները մեծ կարևորություն ունեն Արևմտյան Հայաստանի և հարակից շրջանների սոցիալ-տնտեսական կյանքի, հայ ժողովրդի իրավական վիճակի ու հողատիրության ձևերի հետ կապված բազում հարցերի հետազոտման առումով:

Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ Մ. Զուլալյանը որպես ուսումնասիրող չի սիրել տրորված հետքերով գնալ, այլ մշտապես ունեցել է սկզբնաղբյուրների վրա խարսխված, իր նոր ու թարմ ասելիքը: Աշխատելով «Հայաստանը XVI դարի առաջին կեսին» թեմայի վրա, նա հատուկ քննության առարկա դարձրեց մեծ տարածում գտած մանկահավաքների խնդրին: «Դևշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական ու հայկական աղբյուրների» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1959, N 2-3) Մ. Զուլալյանն ապացուցեց, որ մանկահավաքների կիրարկումը սկսվել է օսմանյան սուլթան Մուրադ I-ի (1359-1390) ժամանակներից, որը նախորդ դարաշրջաններում եղած իրողությունների ընդհանրացումն ու օրինականացումն էր: Բացահայտվում են նաև Թուրքիայում մանկահավաքների իրականացման նպատակները, ձևերն ու մեթոդները, դրա պարբերականությունը, աշխարհագրությունը և այլն: Հեղինակն իրավամբ եզրակացնում է, որ «դևշիրմե»-ն թուրքերի ասիմիլյատորական քաղաքականության ու հպատակ քրիստոնյա ժողովուրդների դիմադրական ուժը թուլացնելու միջոց էր:

Մ. Զուլալյանը համակողմանի քննարկել է XVI-XVII դարերում մեծ տարածում ստացած ջալալիների շարժման պատմությունը և հայկական, թուրքական ու բազմալեզու այլ.այլ սկզբնաղբյուրների հիման վրա հայագիտական գրականության մեջ առաջին անգամ լուսաբանել ջալալիների շարժման նախադրյալները, ընթացքը և հետևանքները:

Պրոֆ. Մ. Զուլալյանը լայն մտահորիզոնի գիտնական քաղաքացի մասնագետ է: Իրեն անմիջականորեն զբաղեցնող թեմայից զատ ձեռնամուխ է եղել այնպիսի հիմնախնդիրների ուսումնասիրմանը, որոնք գիտաքաղաքական համընդհանուր հետաքրքրություն ու նշանակություն ունեն: Մեր պատմագիտության, հաճախ քննադատության արժանացող, էական թերացումներից էր այն, որ ինչպես հարկն է հակահարված չէր տրվում հայոց պատմությունը կամ դրա առանձին հարցերը խեղաթյուրող օտարազգի հեղինակներին: Այդ բնագավառում հրապարակ էին գալիս, լավագույն դեպքում, միայն առանձին հոդվածներ: Մ. Զուլալյանն առաջինը հատուկ աշխատություն նվիրեց այդ խնդրին և 1970 թ. ռուսերեն լեզվով հրատարակեց «Հայաստանի հին և միջնադարյան պատմության հարցերը ժամանակակից թուրքական պատմագիտության լուսաբանմամբ» արժեքավոր ուսումնասիրությունը, որը նոր նյութերով հարստացված հրատարակվեց նաև հայերեն (Երևան, 1995): Հեղինակը հիմնավոր բացահայտել է ժամանակակից թուրք պատմագիտության կեղծիքներն ու միտումնավոր մեկնաբանությունները: Բնականաբար, գիրքը լայն ընդունելություն գտավ ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցող հասարակության կողմից:

1971 թ. Մոսկվայում ռուսերեն լեզվով հրատարակվել է Մ. Զուլալյանի «Հայաստանը XVI դարի առաջին կեսին» աշխատությունը: Պաշտպանելով որպես դոկտորական թեզ (1974 թ.), Մ. Զուլալյանը 1980 թ. հրատարակեց «Արևմտյան Հայաստանը XVI-XVII դարերում» աշխատությու-

նը, որը խոշոր ներդրում էր Արևմտյան Հայաստանի նշված ժամանակաշրջանի պատմության ամբողջական ուսումնասիրման բնագավառում:

Ճանաչում գտած պատմաբանը հրավիրվում է մասնակցելու թուրք հայտնի հեղինակ Էվլիյա Չելեբու ուղեգրության «Սեյահեթ-նամեի», Մոսկվայում բաղմահատոր ռուսերեն թարգմանության իրականացմանը, որը և հրապարակվեց 1983 թ.: Մ. Զուլալյանի մասնակցությունը մեծապես նպաստեց ռուսալեզու ընթերցողներին Հայաստանի մասին թուրք հեղինակի տեղեկությունների ճշմարտացի ներկայացմանը:

Պատմագիտության համար շատ կարևոր է բացահայտել այն իրողությունը, թե Հայաստան ժամանած օտարերկրացիները ի՞նչ մոտեցում են ունեցել, ինչպե՞ս են դնահատել հայոց պատմության հարցերը: Մ. Զուլալյանը 1990 թ. ընթերցողի սեղանին դրեց իր «Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների (XIII-XVIII դարեր)» աշխատության առաջին գիրքը: Աշխատությունն արժեքավոր է և՛ պատմագիտական և՛ աղբյուրագիտական առումներով:

Մ. Զուլալյանը տասնամյակներ շարունակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում և այլ բուհերում՝ Ընդհանուր և Հայոց պատմություն, Արևելքի նոր և նորագույն շրջանի պատմություն, պատմագրություն և այլ առարկաներ: Հմուտ գիտնականն ու մանկավարժը իրեն հատուկ հոգածությամբ ուսանողներին հաղորդել է հարուստ ու բազմակողմ գիտելիքներ, աճեցրել երիտասարդ դիտական կադրեր:

1981 թ. Մ. Զուլալյանը ստացել է պրոֆեսորի կոչում, 1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ և 1995 թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Նրա ղեկավարությամբ շատ ասպիրանտներ ստացել են թեկնածուական, ապա նաև գոկտորական աստիճաններ: Մ. Զուլալյանի խմբագրությամբ լույս են տեսել գիտական բազմաթիվ աշխատություններ: Նա իր ներդրումն է բերել «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի ստեղծման աշխատանքներին՝ հեղինակելով մի շարք բաժիններ ու գլուխներ:

Յոթ տասնամյակը բոլորած գիտնականն ունի գիտական նորանոր ծրագրեր, որոնց իրականացմանը հետամուտ է հաստատակամությամբ ու եռանդով: Չնայած մերօրյա գժվարին պայմաններին, գիտնականը շարունակում է իր գիտելիքներն ու փորձը հաղորդել ուսանողներին և երիտասարդ հետազոտողներին: Նա ղեկավարում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ընդհանուր պատմության ամբիոնը:

Անվանի պատմաբանին ցանկանք քաջառողջություն և դիտական նոր սխրանքներ:

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ